

ԱՄԲԼԻՕՊԻԱՅՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՈՏ ՊԼԵՕՊՏԻԿ ԲՈՒԺՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Սարգսյան Ի.Ս.

Երևանի Մ. Զերացու անվ. պետական բժշկական համալսարանի ակնաբուժական կլինիկա, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 05/08/2013թ., ընդունված է՝ 25/12/2013թ

Տեսողական պատկերի ընկալումը մարդու ուղեղի ֆիզիոլոգիական բարդագույն պրոցեսներից է: Վերջին տարիներին, նեյրոֆիզիոլոգիական հետազոտությունների այդ բնագավառում մեծ առաջընթաց է արձանագրվել: Բացահայտվել են նաև ուղեղի տարբեր օպերացիաների ֆունկցիոնալ հիմքերը, սակայն դեռևս կան շատ չբացահայտված կողմեր:

Չաճախ ցանցաթաղանթի հիվանդությունների կլինիկական պատկերները նույնատիպ են լինում, ինչը և դժվարեցնում է ճշգրիտ ախտորոշումը, հետևաբար՝ և բուժումը: Այստեղ ֆունկցիոնալ փոփոխությունների գնահատումը կարող է օգնել պաթոլոգիկ պրոցեսի ախտորոշման և/կամ ընթացքի գնահատման համար:

Երևանի Մ. Զերացու անվ. համալսարանի ակնաբուժական կլինիկայում տարեկան պլեոպտիկ բուժում է ստանում մոտ երեք հազար երեխա: Առանձին դեպքերում բուժումը կարող է տևել տարիներ, առանց սպասելի արդյունքի:

Մեր ուսումնասիրություններն առաջին հերթին հիմնվել են այն եզրակացության վրա, որ ամբլիոպիայի ախտաբանության մեջ մեծ դեր ունեն ցանցաթաղանթի ֆունկցիոնալ փոփոխությունները, ինչը էլեկտրոռետինոգրամմայի վրա արտահայտվում է b-ալիքի ամպլիտուդայի և լատենտության փոփոխությամբ, ցանցաթաղանթի կենտրոնական հատվածի շիկների աշխատանքի ֆունկցիոնալ դեֆեկտներով՝ ընդհանուր շիկային համակարգի պահպանմամբ:

Ելնելով մեր հետազոտությունների առաջին արդյունքներից, նպատակահարմար տեսանք ամբլիոպիայով երեխաների պլեոպտիկ բուժումը կազմակերպել էլեկտրոֆիզիոլոգիական հսկողության տակ, փորձել գտնել և նշել էլեկտրոֆիզիոլոգիական ցուցանիշների հնարավոր ախտաբանական հատկանիշները (ԷՌԳ- էլեկտրոռետինոգրաֆիա և ՏՀՊ- տեսողական հարուցված պոտենցիալներ):

Ըստ որոշ հեղինակների և նաև մեր սեփական հետազոտությունների արդյունքների, պլեոպտիկ բուժման ֆոնի վրա նկատվում է էֆերենտ արգելակման նվազում և/կամ բուն ցանցաթաղանթում և տեսողական համակարգում գրգռման պրոցեսների գերակշռում: Սակայն նշված գրգռման պրոցեսները հաստատուն չեն և մինչ տեսողական համակարգի վերջնական ձևավորումը (12-15 տարեկանը), պլեոպտիկ բուժման ընդհատման դեպքում տեսողական ֆունկցիաների վերականգնում, առավել ևս՝ լիարժեք բուժում, ոչ միշտ է հնարավոր լինում:

Այսպիսով, պլեոպտիկ բուժման էլեկտրոֆիզիոլոգիական մոնիտորինգը կարող է քննարկվել որպես կլինիկական նշանակալի գործիք՝ երեխաների մոտ ամբլիոպիայի բուժման էֆեկտիվությունը բարձրացնելու նպատակով: